ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/37

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2019թ. թիվ 26/26-1/6969-2019 գրությամբ «Լույս Տորգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 18.04.2019թ. թիվ /18-2/13122-2019 գրության հիման վրա, 26.04.2019թ. թիվ 26/26-1/6969-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Լույս Տորգ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Լույս Տորգ» ՍՊԸ ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լույս Տորգ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կազմակերպած «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով մրցույթի շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 2 անգամ առանձին նամակներով պահանջվել է կատարել հավելվածների ճշտում: Առաջին նակաը ստանալուց հետո անմիջապես, նույն օրը, մի քանի ժամ անց, կատարվել է հավելվածի ճշտում և ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե: Երրորդ նամակը Ընկերությունը ստացել և կարդացել է բավականին ուշ, որի պատճառով սահմանված ժամանակին Ընկերությունը չի հասցրել կատարել ճշտում և ուղարկել: Ընկերությունն ինքնակամ մասնակցում է մրցույթներին, ուստի որևէ դիտավորություն չի ունեցել չկատարելու ճշտումներ, որը չի բխում Ընկերության շահերից:

«Լույս Տորգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/37 ընթացակարգի շրջանակներում 02.05.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.04.2019թ. թիվ /18-2/13122-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով գնման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակում «Լույս Տորգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 526-Ն որոշման 47-րդ կետի (հետայսու նաև՝ Կարգի) 05.04.2019թ. Ընկերությանը ծանուցվել են ներկայացնել հայտերի շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերը չեն ներկայացվել և կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/37 ընթացակարգի շրջանակներում 02.05.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լույս Տորգ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Լույս Տորգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 3 հավելվածը սխալ է լրացված:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps համակարգի միջոցով 05.04.2019թ. ծանուցել է «Լույս Տորգ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լույս Տորգ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.04.2019թ. թիվ 26/26-1/6969-2019

գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 18.04.2019թ. թիվ /18-2/13122-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և

ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լույս Տորգ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Լույս Տորգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 3 հավելվածը սխալ է լրացված:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps համակարգի միջոցով 05.04.2019թ. ծանուցել է «Լույս Տորգ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լույս Տորգ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ***չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Այսպիսով՝ «Լույս Տորգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 3 հավելվածում թե ընթացակարգի հրավերի մասով և թե որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարության բովանդակության մեջ ծածկագիրը «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» փոխարեն նշվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/72», որի հետևանքով թիվ 3 հավելվածը փաստացի հանդիսացել է այլ պատվիրատուի կողմից կազմակերպված այլ ընթացակարգի հրավերի հավելված:

Ընկերությանը Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 05.04.2019թ. ծանուցվել է հայտի թիվ 3 հավելվածում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, որը սակայն Ընկերության սահմանված ժամկետում չի շտկվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Լույս Տորգ» ՍՊԸ-ն «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, քանի որ սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել հայտի թիվ 3 հավելվածի շտկված տարբերակը, ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2019թ. թիվ 26/26-1/6969-2019 գրությամբ «Լույս Տորգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Լույս Տորգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**